Այս մասին առաջին անգամ գրեցի *Նյու-Յորքի Պաշտօնաթերթին* մէջ<sup>9</sup>: Գրուած թիւնս աւարտած էի հետեւեալ տողերով. «Յոյսով ենք որ այս կարեւոր նախընթացի գոյութիւնը պիտի դիւրացնէ ՄԱԿի ցեղասպանութեան վերջնական տեղեկագրին մէջ 30րդ յօդուածի վերահաստատումը: Առ այդ, անհատական նախաձեռնութեամբ, առ որ անկ է տեղեակ պահած ենք՝ անհրաժեշտ դիմումները ընելով»<sup>10</sup>:

Վերի տեղեկութիւններու լրսին տակ էր որ Քուրթ Վալտհայմին 9 Յունիս 1979 եւ Ճորճ Պրենտին՝ 1 Սեպտեմբեր 1979ին գրեթէ նոյնանման նամակներ գրեցի: Այս վերջինէն երկար պատասխան մը ստացայ: Զարմացայ որ Ճորճ Պրենտ որ միշտ՝ պարոն՝ ով կը դիմէր անձիս, այս անգամ ինքնիրմէ դուրսը տիտղոսը տուած էր, զոր չէի օգտագործած եւ չունէի: Ճորճ Պրենտին ինդրած էի որ իմ 1 Սեպտեմբեր 1979 թուակիր նամակս Յատուկ Զեկուցաբերին փոխանցէ: Ան այդպէս ալ ըրած էր, եւ իր պատասխան նամակն ալ կցած՝ որպէսզի հաւասարակշռուած մօտեցում ցոյց տար: Բնականաբար, 26 Նոյեմբեր 1979ին պատասխանեցի իրեն եւ 11 Դեկտեմբեր 1979ին պատասխան նամակ ստացայ թէ՛ բացի եթէ Յատուկ Զեկուցաբեր Ռուհաշիանքիքօ այլապէս որոշէր, ցեղասպանութեան հարցին յատուկ տեղեկագիրը (E/CN.4/Sub2/416) պիտի մնար այնպէ՛ս՝ ինչպէս որ էր, այսինքն՝ առանց 30րդ պարբերութեան:

Ստորեւ կու տամ Պրենտի գրած նամակներս եւ ստացուած պատասխանները:

September 1, 1979

Personal  
Your Ref. G/SO 231/1 (2)

George Brand, Chief  
Research Studies and  
Prevention of Discrimination Section  
Division of Human Rights  
United Nations Office at Geneva  
CH - 1211 - Geneve 10  
Switzerland

Dear Sir,

The U.N. Economic and Social Council endorsed on May 4, 1979 the recommendations of the 35th session of the U.N. Commission on Human Rights 1520th meeting (E/CN.4/SR.1520). The approved recommendation ventured to hope that the Special Rapporteur on the Study of the Question of the prevention and punishment of the Crime of Genocide, would take into account the communications on the omissions of certain passages of a historical nature. As most of the observers in their speeches referred to the omission of paragraph 30 of the said Rapporteur's progress report (E/CN.4/Sub. 2/L. 583), we are hopeful it will be re-included in the Final Report.

At this stage we wish to bring to your good self's esteemed attention that on July 21, 1946 the Economic and Social Council requested the U.N. Secretary

General to make arrangements for the collection and publication of Information concerning Human Rights arising from trials of war criminals. And indeed a 368 pages report was prepared entitled "Information Concerning Human Rights Arising from trials of War Criminals." (E/CN.4/w.20). The Report was before the Human Rights Commission, at its Second Session at Geneva in December 1947.

The Commission expressed appreciation of the report and suggested that the Secretariat should publish it. This recommendation of the Human Rights Commission was before the Economic and Social Council at its Sixth Session (see paragraph 45 of E/600). The Council gave no further directions and the document was issued by the Secretariat as a restricted document on May 15, 1948. Pages 7-15 referred to the massacres of the Armenians in Turkey, the Declarations by the governments of France, Great Britain and Russia, on that subject in May 1915, and the relevant provisions of the treaties of Sevres and Lausanne.

We sincerely hope that through your good offices the above shall be brought to the attention of the Special Rapporteur Mr. Nicodeme Ruhashyankiko.

Yours respectfully,  
Zaven M. Messerlian  
Principal

REF. No: G/SO 231/1 (2)

25 September 1979

Dear Dr. Messerlian,

Thank you for your letter of 1 September 1979 concerning principally United Nations document E/CN. 4/W. 20. Your reference to this document, I may say in passing, was of particular interest to me personally, since I wrote about half of its contents as a member of the Secretariat of the United Nations War Crimes Commission before joining the United Nations Secretariat. I did not, however, contribute the passages to which you draw attention.

At your invitation, I will forward a copy of your letter to the Special Rapporteur, but I will, in order to place the matter into perspective, send him also a copy of this present reply to you.

The document which you mentioned was not prepared by the United Nations Secretariat or by any other United Nations organ, but was prepared by the Secretariat of the United Nations War Crimes Commission, an independent organization whose existence extended from 1943 to 1949. The report was certainly prepared at the invitation of the United Nations Secretariat.

The document was never examined by the United Nations Human Rights Commission as a whole, but by a Sub-Committee of three members of the Commission which stated in its report (E/CN.4/63) that: "The Human Rights Commission will no doubt wish to express its gratitude to the War Crimes Commission for these labours." The Commission "approved" the report of the Sub-Committee and transmitted it to the Economic and Social Council (E/660/para. 45). As you mentioned in your letter, the Council took no action on the matter.

As regards your references to the contents of the report of the War Crimes Commission, I would only mention the statement on its page 21 that the Peace

Treaty of Sevres between Turkey and the Allied Powers did not come into force and that the Treaty of Lausanne, which replaced it, did not contain provisions respecting the punishment of war crimes but was accompanied by a "Declaration of Amnesty" for all offences committed between 1 August 1914 and 20 November 1922.

As regards your first paragraph, it is necessary to recall that the sentiment concerning the reinsertion into the genocide report of historical passages was expressed by the Commission's chairman, and that the Commission agreed to reflect it in its report (E/1979/36, paragraph 313). The Commission's decision on the genocide report (decision 9 (XXXV)) was simply that the study "should be given the widest possible distribution."

I feel that, in the interests of accuracy, I should append these points to any letter that I write to the Special Rapporteur.

Yours sincerely,  
George Brand  
Chief  
Research, Studies and  
Prevention of Discrimination Section  
Division of Human Rights

Dr. Zaven M. Messerlian  
Principal  
Armenian Evangelical College  
BEIRUT  
Lebanon

November 26, 1979

*Personal*  
Your Ref, G/SO 231/1 (2)  
Mr. George Brand, Chief  
Research, Studies and  
Prevention of Discrimination Section  
Division of Human Rights  
United Nations Office at Geneva

Dear Mr. Brand,

Thank you for your letter dated 25 September 1979. I appreciate your forwarding of my letter dated September 1, to the Special Rapporteur.

Even though the U. N. document E/CN.4/W.20 was prepared by the independent organization Secretariat of the United Nations War Crimes Commission at the invitation of the U. N. Secretariat, it was done so upon the request put forward on July 21, 1946 of the U. N. Economic and Social Council, to the U. N. Secretary General, to make arrangements for the collection and publication of information concerning human rights arising from trials of war criminals and traitors. It is also a fact that the U. N. Economic and Social Council re-issued the document in question as a restricted Council document on May 15, 1948.

I appreciate your explanations and the fact that your goodself had a part in preparing half of the contents of the said document (excluding the parts to which I drew attention). The parts concerning the genocide perpetrated on the Armenians, was the work of Dr. Litawski.

I will highly appreciate, if you will be kind to dispatch me the Special Rapporteur's Final Report, if and when it is published, and the minutes of any future Council or sub-commission meeting where paragraph 30's fate is dealt with.

Yours sincerely,  
Zaven M. Messerlian, M. A.  
Principal

ZMM/ss

11 December 1979

Dear Mr. Messerlian,

Thank you for your letter of 26 November 1979.

I am enclosing a copy of the report on genocide as it now exists, document E/CN.4/Sub.2/416.

Unless Mr. Ruhashiankiko decides otherwise, this will be his final report on the subject. If, however, he should make any change in the report, this would appear as a corrigendum to the present document.

Yours sincerely,  
George Brand  
Chief

Research, Studies and Prevention of Discrimination Section

Mr. Zaven M. Messerlian, M.A.  
Principal  
Armenian Evangelical College  
BEIRUT  
Lebanon

*Ճորճ Պրենտ առանձին նամակով ազնուութիւնը կ'ունենար տեղեկացնելու թէ ինք հանգստեան պիտի կոչուէր եւ զինք պիտի փոխարինէր էմիլ Մոմփուանը:*

*Հասկ Հայագիտական Տարեգիրքին մէջ, 1980ին լոյս ընծայուած գրութեանս՝ "The Premeditated Nature of the Genocide Perpetrated on Armenians" առանձնատիպէն օրինակ մը զրկեցի ՄԱԿի նոր Ընդհանուր Քարտուղար ընտրուած Խաւիէ Փերէզ Տը Քուէյարին, շնորհաւորելով նաեւ իր ընտրութիւնը, ապա իր ուշադրութեան յանձնելով ջնջուած 30րդ պարբերութեան վերահաստատման կարեւորութիւնը՝ 28 Յունուար 1982 թուակիր նամակիս մէջ: Ստորեւ՝ ՄԱԿի Ընդհանուր Քարտուղարին գրած նամակս:*

January 28, 1982

*Personal*  
The Honourable  
Javier Pérez de Cuellar  
Secretary General of the United Nations  
U.N. Headquarters

New York, N.Y.

Dear Sir,

First of all, I wish to congratulate you on your election to the important task of U.N. Secretary General and wish you success in all your endeavours to maintain world peace. I hope in your term of office, the human rights of minorities and small nations will be defended by your goodself.

Profiting from this occasion I wish to bring to your esteemed attention a problem of concern to us. I am also enclosing herewith, an offprint of my recent study *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on Armenians*, for your perusal.

In 1973, a U.N. progress report entitled *Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide (E/CN.4/Sub. 2/L.583)* had alluded in a general manner to the genocide perpetrated on the Armenians in 1915 (paragraph 30). In 1974 Turkey objected to the inclusion of this paragraph along with some other states. The Rapporteur unfortunately complied with the expressed wish. This created a wide reaction. In 1978-1979 several states, including the U.S.A., U.S.S.R., France, etc. in the 35th session of the U.N. Commission on Human Rights, in its 1520th meeting (E/ CN .4/SR .1520) approved a recommendation which ventured to hope that the Special Rapporteur of the above mentioned study, would take into account the communications on the omissions of certain passages of a historical nature. As most of the observers had referred to the omission of the said paragraph 30, it was hoped it will be re-included in the Final Report. We understand no change has been done, nor a corrigendum issued.

Whereas, the genocide perpetrated on the Armenian nation claimed more than 1.5 million lives, about half of our nation, and it was the first genocide of the 20th century,

Whereas, Adolf Hitler, himself was inspired from the oblivion of the genocide of the Armenians, and cited it to his generals, and S.S. staff in Obersalzburg on August 22, 1939, before the Holocaust of World War II (*Nazi conspiracy and Aggression, office of the United States Chief Counsel for prosecution o f Axis Criminality*, Washington D.C. 1946, vol. VII, p. 753),

Whereas a U.N. report entitled "*Information Concerning Human Rights Arising from Trials of War Criminnals*" (E/CN.4/W.20) has devoted 8 pages to the massacres of Armenians in World War I, thus setting a precedent,

Whereas the Nuremberg Trial of Nazi War Criminals was in one way legally justified by the precedent of the massacres of the Armenians and the Allied warning to the Ottoman government in 1915 (*Foreign Relations of the U.S.*, 1915, British Foreign Office Public Records F.O. 371/2488). During the judgement of the International Military Tribunal at Nuremberg the French delegate Prof. Andre Gros had mentioned that during the massacres of the Armenians in 1915 his government had declared that in view of these "crimes against humanity" the Allied governments had declared the Ottoman cabinet and their agents would be personally responsible for their acts. (*International Conference on Military Trials*, p. 293, 360),

Whereas the aetiology of genocide should include past genocides, particularly those of the 20th century,

The genocide perpetrated on the Armenians should not be left out of any serious study, for historical, legal and moral considerations,

We request your kind and high intervention to see that this least justice is done to the Armenians.

Yours sincerely,  
Zaven M. Messerlian, M.A.  
Principal

ZMM/ss

*Սոյն նամակին պատասխանն ստացայ Ընդհանուր Քարտուղարին անունով՝ Տանըրտ Ֆիցիալթրիքէն, որ Յատուկ Օգնականն էր Քաղաքական եւ Մարդկայնական Հարցերու Ենթա-Ընդհանուր Քարտուղարին Քաղաքական եւ Ընդհանուր Ժողովի գործերու Գրասենեակին: 5 Մարտ 1982 թուակիր նամակին մէջ ան կը յիշեցնէր թէ Հայոց Յեղասպանութեան Հարցը դուրս ձգուած էր տեղեկագիրէն եւ թէ Ընդհանուր Քարտուղարը կամ Յանձնախումբի անդամները չէին կրնար Յատուկ Զեկուցաբերին գրած տեղեկագիրը բարեփոխել:*

*Ստորեւ՝ Ֆիցիալթրիքի նամակը:*

5 March 1982

Dear Mr. Messerlian,

I wish to acknowledge receipt of your letter of 28 January 1982 addressed to the Secretary-General, expressing kind words of congratulation, and drawing his attention to certain events covered in your recent study of genocide.

As you know, there is a lengthy history underlying the final report of the Study of the Question of the Crime of Genocide, which was prepared in 1978 by a Special Rapporteur of the Sub-Commission on the Prevention of Discrimination and Protection of Minorities. While this study was considered at the 31st session of the Sub-Commission and subsequently endorsed by the 35th session of the Commission on Human Rights, excerpts from official records (enclosed) reflect that:

“Some members of the Sub-Commission on Human Rights expressed regret over the deletion from the study of reference to the massacre of Armenians by the Ottoman Empire in the years 1915 to 1918 which had appeared in an earlier document submitted by the Special Rapporteur.”

You will also note, however, that the study was supported by a majority of the Sub-Commission’s members, and that the Special Rapporteur had discussed in detail his recommendations, and reasons for leaving the final report intact.

I might add that in this regard, it is not within the competence of the Secretary-General nor Commission members to amend the reports of the Sub-Commission’s Special Rapporteurs who function in their personal capacities as independent experts.

I wish to thank you for your interest in this matter and assure you of the Secretary-General's deep concern for violations of fundamental human rights wherever they may occur.

Yours sincerely,  
Donald E. Fitzpatrick  
Special Assistant for  
Political and Humanitarian Affairs  
Office of the Under-Secretary-General for  
Political and General Assembly Affairs

Mr. Zaven M. Messerlian, M.A.  
Principal  
Armenian Evangelical College  
BEIRUT  
Lebanon

*Նամակներու մէջ յիշատակուած ՄԱԿի 1948ի տեղեկագիրը՝ E/CN.4/W/20, անհրաժեշտ էր ձեռք ձգել, յատկապէս՝ հայոց վերաբերող 7-8 էջերը գտնել: Լեւոն Քէշիշեանին գրեցի: Ան ՄԱԿի մէջ փորձեց գտնել:*

*Չգտաւ:*

*Ի վերջոյ օր մը, մօրաքրոջս տան մէջ, իր ամուսինին հարազատներէն Երուսաղէմի հին հայերէն Պրն. Խաչատուր Խաչատուրեանին (որ յետոյ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմին սպաննուեցաւ) հետ Հայկական Դատի մասին պատահական խօսակցութեան մը ընթացքին, երբ իմ փնտուտութիւնս մասին խօսեցայ, տեղեկացուց որ ՄԱԿի գրադարանավարը իր հարազատներէն Պրն. Նիքոլա Փոթուքեանն էր: Գրեցի անոր, եւ 24 Ապրիլ 1981ին Պրն. Փոթուքեանն դրապէս ընդառաջեց գրելով որ հայութեան լաւագոյն շահերուն համար օգտագործէի իր ներփակած հայոց վերաբերող E/CN.4/W/20 տեղեկագրին էջ 7-15ը: Ան նշեց, որ տեղեկագրին նախկին թիւը՝ որուն տակ պահուած էր այդ, փոխուած էր:*

*Անգամ մը որ ունեցայ վաւերաթուղթը, անգլերէնով՝ մեկնաբանական գրութիւն մը՝ “A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide” վերնագրով լոյս ընծայեցի Հասկ Հայագիտական Տարեգրքին մէջ<sup>11</sup>:*

*Լեւոն Քէշիշեանի հետ մնայուն թղթակցական կապի մէջ էի եւ զինք տեղեկ կը պահէի կատարած աշխատանքէս եւ զրկուած ու ստացուած նամակներէն: Իրեն ալ օրինակ մը դրկած էի “A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide” ուսումնասիրութեանս առանձնատիպէն:*

*Ահա թէ ինչ կը գրէր Լեւոն Քէշիշեան Հայրենիքի կողմէ հրատարակուած The Armenian Weeklyի 11 Յունիս 1983ի թիւին մէջ, This and That from New York իր սիւնակին մէջ:*

Dr. Zaven Messerlian of Beirut has published a very important article on the question of genocide. He has succeeded in obtaining a "restricted" copy of a report by the United Nations on the genocide, in which mention of the Turkish massacres of the Armenians is adequately mentioned. This restricted report is E/CN.4/W.20/Corr. 1 of May 28, 1948, which is not available to those trying to study the question of genocide at the U.N.

The report was issued in a restricted manner by the Commission on Human Rights, Third Session, entitled "Information concerning human rights arising from the trials of war criminals." Messerlian was looking for this report for many years and finally received a tip from a British historian. He managed to obtain a copy from the British archives.

In my study on genocide, examining the U.N. official records, including the tapes of the meetings, I found no mention of the Armenians, but the restricted document released by Messerlian is a very important revelation. Bravo Zaven. He has been an active collaborator in the field of paragraph 30 and he kept a regular correspondence with the U.N. Secretary General and the Department of Human Rights. (One of the last letters he obtained from the United Nations is dated March 5 and a copy was sent to me.)

Now that the Economic and Social Council has endorsed the appointment of a new Rapporteur to complete the study of genocide, I expect the result to be more forceful with the new document which was never mentioned in the study by the former Special Rapporteur on genocide, Nicodeme Ruhashyankiko<sup>12</sup>.

*Ամէնէն կարեւորը այն էր որ Յատուկ Զեկուցաբեր Ռուհաշիանքիքօ պաշտօնաթող եղած էր եւ նոր Յատուկ Զեկուցաբեր մը պիտի նշանակուէր: Ուստի, 1 Յուլիս 1983 թուակիր նամակով պատասխանեցի Տանըրտ Ֆիցփաթրիքի 5 Մարտ 1982ի նամակին եւ իրեն ղրկեցի նաեւ “A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide” առանձնատիպէն, խնդրելով որ նամակիս մէջ նշած նկատողութիւններս կամ առանձնատիպս նոր զեկուցաբերին ուղարկութեան յանձնէր:*

*Ստորեւ՝ այդ նամակը:*

July 1, 1983

Mr. Donald E. Fitzpatrick  
Special Assistant for  
Political and Humanitarian Affairs  
Office of the Under-Secretary-General for  
Political and General Assembly Affairs  
United Nations, N.Y. 10017

Dear Sir,

I wish belatedly to acknowledge receipt of your letter dated March 5, 1982. The reason for the delay is that due to the recent war in Lebanon, my article *A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide* was just only recently published. I am enclosing herewith a copy.

The U.N. Economic and Social Council, at its 15th meeting, on 27 May 1983, adopted resolution 1983/33 which calls for the revision and updating of the *Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide* (E/CN.4/Sub. 2/416). The Council further requests the Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities to appoint one of its

members as a Special Rapporteur with the mandate to revise as a whole the above mentioned report, taking into consideration the views expressed by the members of the Sub-Commission and the Commission on Human Rights as well as replies of Governments, specialized agencies and other organizations of the U.N. regional organizations and non-governmental organizations to a questionnaire prepared by the Special Rapporteur.

Now, that the report will be revised, it is necessary that the views expressed in the 31st session of the Sub-Commission on Prevention of Discriminations and Protection of Minorities (E/CN.4/1296, E/CN.4/Sub. 2/417 dated 20 September 1978, p. 46 paragraph 237) be taken into consideration, as well as the references in the 35th session of the Commission on the Human-Rights over the deletion from the study of a reference to the massacre of Armenians by the Ottoman Empire in the years 1915 to 1918 which had appeared in an earlier document submitted by the Special Rapporteur (paragraph 30, E/CN.4/Sub.2/416).

The genocide perpetrated on the Armenians cannot be left out of any serious study, as the U.N. Economic and Social Council's Commission on Human Rights Third Session report E/CN.4/W.20 dated 28 May 1948, has already done so extensively because the massacres of 1915-18 were considered by the Allied Nations by their memorandum to the Ottoman authorities, on 28 May 1915 as "crimes against humanity and civilization". This was taken up in Article 230 of the Treaty of Sevres, and later set a legal precedent for Articles 6(c) and 5(c) of the Nuremberg and Tokyo charters by which the war criminals were tried, sentenced and punishment.

I will highly appreciate if my remarks and/or my article's offprint are brought to the attention of the new Special Rapporteur through your kind Intervention.

Yours sincerely,  
Zaven M. Messerlian, M.A. FIBA<sup>13</sup>  
Principal

*Հեռոն Քէշիշեան կրկին Armenian Weeklyի 27 Օգոստոս 1983ի թիւին մէջ կը գրէր, This and That from New York իր սիւնակին մէջ.*

Dr. Zaven Messerlian of Beirut submitted to the Special Assistant for Political and Humanitarian Affairs of the United Nations, a copy of his article entitled, "A United Nations Report in 1948 of the Armenian Genocide." He wrote in his letter that since the United Nations Economic and Social Council calls for the updating of the "Study on the Question of the Presentation and Punishment of the Crime of Genocide," and has requested the Sub-Commission on the Prevention of Discrimination and the Protection of Minorities to appoint a new special rapporteur with the mandate to revise and update the genocide study, that the U.N. place his study at the disposal of the new rapporteur.

Dr. Messerlian says that when the report is updated and revised, it will be necessary that the views expressed in the 31st session of the Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities (E/CN.4/1296; E/CN.4 Sub. 2/417 dated Sept. 20, 1978, page 46, paragraph 237) be taken into consideration, as well as the reference in the 35th session of the

Commission on Human Rights over the deletion from the study of reference to the massacres of the Armenians by the Ottoman Empire in the years 1915 to 1918, which appeared in earlier reports under paragraph 30, E/CN.4/Sub.2/416.

He further writes that the genocide against the Armenians cannot be left out of *any* serious study, as the U.N. Economic and Social Council's Commission on Human Rights Third Session report E/CN.4/W.20 dated May 28, 1948, has already said extensively, because the massacres of 1915-18 were considered by the Allied Nations in their memorandum to the Ottoman authorities on May 28, 1915, as "crimes against humanity and civilization." This was taken up in Article 230 of the Treaty of Sevres, and later set a legal precedent for Article 6(c) and 5(c) of the Nuremburg and Tokyo charter by which the war criminals were tried, sentenced and punished.

Zaven Misserlian, president of the Armenian Evangelical College in Beirut, has been very active in the work that resulted finally in the U.N. adoption of paragraph 30. He has worked hard, supplied statements, written letters to the Secretary General of the U.N., his greatest contribution being his discovery and uncovering of the restricted U.N. document E/CN.4/W.20 of May 28, 1948, which I cannot put my hand on at the U.N. headquarters. Someone has destroyed or removed this very important document. Once again, bravo Zaven for exposing the U.N. and its lack of diligence, and for publicly making it known and giving its official, restricted number<sup>14</sup>.

*Քէշիշեան նաեւ կը գրէր The Armenian Reporter (Նիւ Եորք), The Armenian Mirror-Spectator (Պոսթըրն), The Armenian Observer (Լոս Անճելըս) թերթերուն՝ նոյն նիւթերով եւ նոյն սիւնակով:*

*Շատ գոհ մնացի երբ Տանըրտ Ֆիցփաթըրիքէն 12 Յուլիս 1983 թուակիր նամակ մը ստացայ, ուր զիս կը տեղեկացնէր թէ Յատուկ Ձեկուցաբերին ուշադրութեան պիտի յանձնէր գրածս եւ զրկած առանձնատիպս: Հասած էի նպատակիս:*

*Ստորեւ՝ իր նամակը.*

12 July 1983

Dear Mr. Messerlian,

Thank you for your letter of 1 July enclosing a critique of the United Nations Report written in 1948 relating to Armenian Genocide.

As you requested, I shall draw it to the attention of the Special Rapporteur through appropriate officials in the Centre for Human Rights at Geneva.

Yours sincerely,

Donald E. Fitzpatrick

Special Assistant

Political and Humanitarian Affairs

Mr. Zaven M. Messerlian, MA, FIBA  
Principal  
Armenian Evangelical College  
PO Box 3672

BEIRUT – Lebanon

*Լոզանի Դաշնագրի 60ամեակին առիթով Հայ Իրաւանց Կեդրոնական Խորհուրդ մը կազմուած էր Պէյրութի մէջ, որուն անդամակցութեան հրաւիրուած էի: Օգտուելով այդ հանգամանքէն առաջարկիս վրայ եւ իմ խմբագրութեամբ ՄԱԿի Ընդհանուր Քարտուղար Խաւիէ Փերէզ Տը Քուէյյարին հետեւեալ նամակը ղրկուեցաւ Հայ Իրաւանց Կեդրոնական Խորհուրդին<sup>15</sup> կողմէ, զոր ստորեւ կու տամ:*

August 18, 1983

The Honourable  
Javier Perez de Cuellar  
Secretary General of the United Nations  
United Nations, N.Y. 10017

Dear Sir,

Whereas, the U.N. Economic and Social Council, at its 15th meeting, on 27 May 1983, adopted resolution 1983/33 calling for the revision of the Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide (E/CN.4/Sub. 2/416), as well as the forthcoming appointment of a new Special Rapporteur entrusted with the above task, the Central Council of Armenian Rights demands in the name of the Armenians of the Diaspora, the re-insert ion of paragraph 30 of the original progress report (E/CN.4/Sub. 2/L. 583), on the following grounds.-

- a) Any serious study must include the aetiology of genocide, particularly those of the 20th century.
- b) 1.5 million Armenians perished, the greater part of their homeland of immemorial times vacated of its native inhabitants was seized for good , this genocide went unpunished and was soon forgotten, by his very admission Adolf Hitler was encouraged by this oblivion and said so to his generals in Obersalzberg on August 22, 1939, while giving his directives to attack the Polish people.
- c) Many delegations have already demanded the re-inclusion of the reference to the genocide of Armenians (E/CN.4/1296, E/CN.4/Sub. 2/ 417 dated 20 September 1978, p. 46, paragraph 237).
- d) There is already a precedent, the U.N. Economic and Social Council's Commission on Human Rights, Third Session report E/CN.4/W.20 dated 28 May 1948, has done so extensively (p. 7-15).
- e) The warning given by the Allied Nations in World War I to Ottoman Turkish Government on 28 May 1915 concerning their "crimes against humanity and civilization", later taken up in Article 230 of the Treaty of Sevres, served as a legal precedent for Articles 6(c) and 5(c) of the Nuremberg and Tokyo charters for the trial of the War Criminals of World War II.

Therefore for moral, historical and legal reasons the genocide perpetrated on the Armenians should be mentioned in the study on genocide which is to be revised by a new Special Rapporteur.

As this case will be studied in Geneva, at the Human Rights Commission meeting to be held between August 15 and September 9, we request you to pass this letter to the appropriate Commission, hopefully with your favourable recommendation.

For and on behalf of the Central  
Council of Armenian Rights

*Որքան որ գիտեմ, նամակին պատասխան չեկաւ կամ գէթ տեղեակ չեղայ նման պարագայէ մը:*

*Մինչ այդ, Յեղասպանութեան Ոճիրի Կանխարգիլման Եւ Պատժումի Հարցին նոր գեկուցաբեր նշանակուած էր բրիտանացի Պենճըմին Ուիթիքըրը: 9 Օգոստոս 1984ին Հայկական թերթերը գրած էին թէ Ուիթիքըրը վերստին պիտի ընդգրկէր Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը իր պատրաստելիք վերջնական տեղեկագրին մէջ:*

*Քաջաբերուած լուրէն՝ գնահատական նամակ մը ուղղեցի իրեն, միաժամանակ նշելով տարիներու ընթացքին պաշտպանած կէտերս:*

August 10, 1984

Benjamin Whitaker, Esq.,  
Special Rapporteur on the  
Study of the Question of the prevention and punishment  
of the Crime of Genocide  
United Nations Office at Geneva  
Palais des Nations  
CH-1211 Geneve 10  
Suisse

Dear Sir,

Yesterday I read a news item in the newspapers which exhilarated me. Finally, the paragraph concerning the genocide perpetrated upon the Armenians is going to be re-inserted in the U.N. Report, *The Study of the Prevention and Punishment of the Crime of Genocide*, thanks to your goodself. We highly appreciate your integrity, historical objectivity, impartiality and your aloofness from political considerations.

In 1972 in response to a letter of mine directed to the then Secretary General of the U.N., I was informed by George Brand then Chief, Section on Prevention of Discrimination and Protection of Minorities, in the U.N. Division of Human Rights, on 22 January 1973, in his letter reference SO 236/1 (2) that “the information You have sent us will be kept in mind in the preparation of the next report on the study which will probably include a chapter on the historical background of genocide”. In June 1973 in the initial report (E/CN.4/ Sub.2/416) paragraph 30 was included to mention “the first genocide of the 20th century”, as I had done in my well documented letter. When the paragraph was unjustly deleted due to political pressure, I entered into lengthy correspondences with the U.N.

Secretary General, Mr. George Brand, and lastly Mr. Donald E. Fitzpatrick, Special Assistant, political and Humanitarian Affairs.

I had sent to him an offprint of my article *A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide*. In his letter dated July 12, 1983 he had promised “As you requested, I shall draw it to the attention of the Special Rapporteur through appropriate Officials in the Centre for Human Rights at Geneva.” I hope that offprint finally came to your hands, for your perusal. The U.N. document in question is E/CN.4W.20 of May 28, 1948 pp. 7-15. Therein is the warning given by the Allied Nations in World War I to the Ottoman Turkish government on 28 May 1915 concerning their “crimes against humanity and civilization”. This was later taken up in Article 230 of the Treaty of Sevres and served as a legal precedent for Articles 6(c) and 5(c) of the Nuremberg and Tokyo charters for the trial of the War Criminals of World War II.

With my best personal regards and esteem of your goodself, I remain, yours  
sincerely,

Zaven M. Messerlian, M.A.  
F.I.B.A., A.A.A.B.I.<sup>16</sup>  
Principal

**5 Օգոստոսին 30 Օգոստոս 1985 տեղոյ ՄԱԿի Մարդկային Իրաւանց Խորականութեան Կանխարգիւման Եւ Փոքրամասնութեանց Պաշտպանութեան Ենթայանձնախումբի 38րդ նստաշրջանին, Ենթայանձնախումբի Յատուկ Զեկուցաբեր Պենճըմին Ուիթիքըրի ցեղասպանութեան վերաբերեալ տեղեկագիրը քննարկուեցաւ: Յանձնախումբի նիստերուն կը նախագահէր Յունաստանի ներկայացուցիչը՝ Տիկ. Էրիքա Տաէս<sup>17</sup>:**

**Պենճըմին Ուիթիքըր Բրիտանական Խորհրդարանի նախկին անդամ էր եւ Փոքրամասնութեանց Իրաւունքներու Խումբի տնօրէն ու 1984-85ին՝ Յատուկ Զեկուցաբեր: Ուիթիքըրի տեղեկագրի 24րդ պարբերութեան մէջ ընդգծուած էր. «Նացիներու արարքը դժբախտաբար Ի. դարու միակ ցեղասպանութեան պարագան չէ, այլ կրնանք յիշել նաեւ... հայերու ջարդը Օսմանեան Թուրքիոյ կողմէ, 1915-1916ին...»: Հոս նշուած էին ութը այլ ցեղասպանութիւններ: Հայտը վերաբերեալ նախադասութեան համար թիւ 13 ծանօթագրութեամբ, իբրեւ տողատակ, կը նշէր. «նուագագոյն մէկ միլիոն, եւ հաւանաբար հայ բնակչութեան կէսէն աւելին, վստահելի գնահատութեամբ եւ ըստ անկախ աղբիւրներու եւ ականատեսներու վկայութեան, սպաննուած են եւ կամ մահուան կարաւաններուն քշուած: Այս ապացոյցները երեսն եկած են այն տեղեկագիրներէն, որոնք կը գտնուին Մ. Նահանգներու, գերմանական եւ անգլիական արխիւներուն մէջ, ինչպէս եւ այդ օրերուն Օսմանեան Կայսրութեան մէջ գտնուող դիւանագետներուն, ներառեալ օսմանցիներու դաշնակից գերման դիւանագետներու մօտ: Գերմանիոյ դեսպան Վանկենհայն, օրինակ, 7 Յուլիս 1915ին կը գրէ, թէ՛ «իրապէս կառավարութիւնը լրջօրէն կը հետապնդէ հայ ցեղը Օսմանեան Կայսրութեան մէջ բնաջնջելու իր նպատակը» (Վիլիելմսթրասի արխիւ): Թէեւ յաջորդ թուրք կառավարութիւնը օգնեց որ դատարան յանձնուին ջարդերու պատասխանատուներէն քիչեր, որոնք յանցապարտ հռչակուեցան, այսուհանդերձ, ներկայ թուրք կառավարութեան պաշտօնական տեսակէտը այն է, թէ ջարդ տեղի ունեցած չէ, թէեւ կռիւներու ընթացքին**

տեղի ունեցած են կորուստներ եւ տարագրումներ, եւ թէ ասոր հակասող ամէն վկայություն կեղծ է»: Ասոր կը յաջորդեն 12 այլազան սկզբնաղբիւրներ եւ երկրորդական աղբիւրներ, որոնցմէ քանի մը հատը թրքական տեսակէտը կը պատկերացնէին:

Վիճաբանութիւններու ընթացքին տարբեր շարժառիթներէ մղուած կարգ մը մասնագէտներ, յատկապէս իսլամական երկիրներէ (Եգիպտոս, Յորդանան, Մարոք, Պենկլատէչ) եւ արեւմտեան կարգ մը երկիրներէ, իր դէմ արտա-յայտուեցան պատմական պարագաներու յիշատակումին եւ յատկապէս անդրադարձան 24րդ պարբերութեան ու մանաւանդ հայերու պարագային:

Չորս հայեր եւս, 19 Օգոստոսին ելոյթ ունեցան: Անոնք էին, իրենց ելոյթներու շարքով՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Միջազգային Հարցերու Յանձնախումբի ներկայացուցիչ՝ Փրոֆ. Շաւարշ Թորիկեան, Գերութեան Դէմ Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Ընկերակցութեան ներկայացուցիչ՝ Պրն. Հրայր Պալեան, Բնիկներու Համաշխարհային Ընկերակցութեան ներկայացուցիչ Պրն. Յարութ Սասունեան, Յեղերու Եւ Ժողովուրդներու Միջեւ Եղբայրական Միութեան Միջազգային Շարժումի ներկայացուցիչ՝ Տքթ. Ռոպերթօ Մալխասեան: Չորսն ալ պատմական տուեալներով եւ այլապէս պաշտպանեցին հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան ներառումը տեղեկագրին մէջ:

Ելոյթ ունեցողներէն Փրոֆ. Թորիկեան եւ Սասունեան ի միջի այլոց յիշատակեցին *Խօսնակի Յուլիս-Սեպտեմբեր 1979ի թիւ 7-9ի մէջ առաջին անգամ հրատարակուած մէկ յայտնաբերումս՝ «Պատմական Կարեւոր Յայտնութիւն Սը՝ 1948ին Պատրաստուած ՄԱԿի Մէկ Տեղեկագիրը 8 էջեր Տրամադրած էր Մեծ Եղեռնին»* խորագրով: Յետագային աւելի մանրամասն ու պատմագիտական ձեւով գայն տուած էի *Հասկ Հայագիտական Տարեգրքի Բ. Հատորին մէջ, (1981-1982), անգլերէնով:*

Փրոֆ. Թորիկեան ըսած է. «Նոյնպէս, Մարդկային Իրաւանց Յանձնախումբին համար 1948ին պատրաստուած տեղեկագրին մէջ (փաստաթուղթ E/CN.4W.20) ... քննարկուած են հայկական ջարդերը»: *Իսկ Սասունեան նշած է. «Շատ աւելի կանուխ, 1948ին, քաղաքական ճնշումներ ՄԱԿին առաջնորդած էին իբր սահմանափակեալ հրատարակութիւն լոյս ընծայել փաստաթուղթ մը պատերազմներու ոճրագործներու դատաւարութեան առնչութեամբ, որուն մէջ 8 լրիւ էջեր յատկացուած էին 1915ի հայկական ջարդերուն (փաստաթուղթ E/CN.4W.20): Անգլիական Ֆորէյն Օֆիսի Օգոստոս 1948ի վաւերաթուղթերէն մին (371/72810) կը յայտնէր թէ այդ ժամանակուան թրքական դեսպանը խնդրած էր հայկական ցեղասպանութեան յատկացումը էջերուն 9նոյնը»:*

*Թուրքիոյ դեսպան էրճիւմենթ Եաւուզալի, որ իբրեւ դէտ կը մասնակցէր, նստաշրջանին ընթացքին՝ 19 Օգոստոսին, ելոյթ ունենալով յայտնած էր թէ Ուիթիլքըրի տեղեկագիրը սխալ տեղեկութիւններ կը պարունակէր 1915-1916ի դէպքերուն մասին, որովհետեւ «Օսմանեան կառավարութիւնը օրինական կերպով ճնշած էր հայոց ըմբոստութիւնը,- թէեւ,- վայրագութեան անհակակշիռ դէպքեր» տեղի ունեցած էին: Թուրք տեսակէտը պաշտպանած էր այլ թուրք մը՝ Դոկտ. Աթաէով, որ ելոյթ կ'ուսնենար իբրեւ Յեղային Խորականու-*

թեան Ամէն Ձեւի Վերացման Միջազգային Կազմակերպութեան ներկայացուցիչը: Փաթիստանի դէտը եւս իրենց ճայնակցած էր:

Յատուկ Ձեկուցաբեր Ուիթիքըրը, 20 Օգոստոսին, իր պատասխան-երոյթին մէջ կարեւոր տեղ յատկացուց հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան, յայտնելով թէ ութը տարիներ յատկացուցած էր անոր սերտողութեան: այդ մասին խօսած էր թուրք դիւանագէտներու, մտաւորականներու եւ ուսումնասիրողներու հետ, ինչպէս նաեւ ուրիշ ազգերու պատկանող անձերու հետ եւ իր աղբիւրները քաղած էր թրքական, գերմանական եւ աստրիական աղբիւրներէ, մանաւանդ որ Գերմանիան եւ Աւստրիան թուրքիոյ դաշնակիցներ էին խնդրոյ առարկայ ջարդերուն ատեն: Ըստ գերման աղբիւրներուն՝ օսմանեան կառավարութիւնը դիտումնաւոր կերպով կը բնաջնջէր հայերը: Պատերազմէն ետք թուրք ատեանները դատած էին ջարդերու պատասխանատուները: Եւ թէ՛ պատմութեան այս գլուխը պատուով փակուելու էր: Ան եզրակացուց, թէ՛ մասնագէտները եթէ քաջութիւն չունին ճշմարտութիւնը խօսելու, իրենց ենթայանձնախումբի գործին մասնակցութիւնը անիմաստ էր, քանի ենթայանձնախումբին պարտականութիւնն էր գոհերը պաշտպանել քան թէ՛ կառավարութիւնները:

Այս յատուկ երոյթին վրայ, թուրքիոյ դէտը՝ Եաւուզարփ, ուզեց խօսք առնել, բայց օրուան ատենապետուհին՝ Տիկ. Տաէս, չթոյլատրեց՝ «խօսակցութիւնը փակուած է» յայտարարելով: Թուրքիոյ դէտը յայտնեց թէ կը հնազանդի ատենապետուհին որոշումին, «բայց կը ցալի որ ենթայանձնախումբը ինքզինք կը հիմնէ Յատուկ Ձեկուցաբերին յայտարարութիւններուն վրայ եւ կը մեղադրէ երկիր մը ոճիրով մը, գոր չէ գործած»:

Ուիթիքըրի տեղեկագիրը իր ամբողջութեան մէջ քուէարկութեան դրուեցաւ 29 Օգոստոս 1985ին եւ որդեգրուեցաւ 14 թեր, 1 դէմ եւ 4 ձեռնպահ քուէներով: Տեղեկագիրն ի նպաստ քուէարկեցին Արժանթին, Ֆրանսա, ԱՄՆ, Մեքսիքո, Եոկոստրալիա, Չինաստան, Ճափոն, Նիկերիա, Եթովպիա, Ղանա, Հնդկաստան, Պերու, Քանադա եւ Էքուատոր: Դէմ քուէարկեց Խ. Միութիւնը, իսկ ձեռնպահ մնացին Յորդանան, Քուպա, Մարոք եւ Պենիլատէչ: Քուէարկութեան ատեն բացակայ էին վեց երկիրներու մասնագէտ պատուիրակները:

Որդեգրուած որոշումը կը հաստատէ թէ ենթայանձնախումբը «արձանագրած» է Ուիթիքըրի տեղեկագիրը, շնորհակալութիւն կը յայտնէ եւ կը շնորհակարէ հեղինակը իր ներկայացուցած առաջարկներուն համար: Ենթայանձնախումբը, սակայն, մերժեց տեղեկագիրը փոխանցել Մարդկային Իրաւանց Յանձնախումբին: Ուիթիքըր ժողովէն ետք յայտնեց թէ իր տեղեկագիրը լոյս պիտի տեսնէր իբրեւ ՄԱԿի մէկ պաշտօնական տեղեկագիրը:

Խ. Միութեան պատուիրակը իր ժխտական քուէն բացատրեց ըսելով թէ իր կառավարութիւնը համաձայն չէր Ուիթիքըրի տեղեկագիրին մէջ տեղ գտած այն առաջարկներուն, որոնք կը միտէին փոփոխութիւններ մտցնել ՄԱԿի Ցեղասպանութեան Դաշնագրութեան մէջ: Ան ըսաւ թէ ՄԱԿի բոլոր պետութիւնները, ներառեալ ԱՄՆը, որ ցարդ չէ ստորագրած զայն, նախ ստորագրէին դաշնագրութիւնը եւ յետոյ բարեփոխութեան առաջարկներ ըլլային:

Նախապէս, Խորհրդային պատուիրակ Վ. Սոֆինսքի Փաթիստանի դէտին երոյթին պատասխանելով ընդգծած էր. «Թուրքիոյ այն ժամանակուան կա-

ռավարողներու կողմէ հայոց դէմ կատարուած հրէշային ցեղասպանութիւնը ոչ մէկ կերպով կարելի է արդարացնել»<sup>18</sup>:

*Թեր քուէարկողներէն ոմանք, ինչպէս ԱՄՆի պատուիրակ Ճոն Քերի, նաեւ՝ Մեքսիքոյի եւ Պելճիքայի պատուիրակները, քուէարկութենէն առաջ կամ նիստերու ընթացքին հայանպատ գիրք չէին բռնած:*

*Ուիթիքըրի տեղեկագրին 24րդ պարբերութիւնը այսպէսով կու գար վերահաստատելու նախկին զեկուցաբերին պատրաստած տեղեկագրէն դուրս ձգուած 30րդ պարբերութիւնը:*

*30րդ պարբերութեան վերահաստատումը, իբրեւ 24րդ պարբերութիւն տեղի կ'ունենար համասփիւռքեան հայկական համագգային ջանքերով, որուն մէջ նաեւ տողերս գրողին ջանքերն ալ կային*<sup>19</sup>:

## **ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

<sup>1</sup> Չաւէն Սըրրլեան, «ՄԱԿի 30րդ Պարբերութեան Ծննդոցը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԺԱ. Հատոր, Պէյրութ, 1991, էջ 10-27:*

<sup>2</sup> Շողիկ Աշրգեան, «Լիբանանահայ Գաղութը Եւ Հայկական Յեղասպանութեան Հարցը (1965-1975)»՝ *Armenians of Lebanon. From Past Princesses and Refugees to Present-Day Community*, Aida Boudjikianian (ed.), Haigazian University and the Armenian Heritage Press, Beirut, 2009, էջ 352-353:

<sup>3</sup> Չաւէն Սըրրլեան, «Հայերու Դէմ Գործուած Յեղասպանութիւնը ՄԱԿի Մարդկային Իրաւանց Յանձնախումբին Առջեւ», *Երիտասարդ Հայ, Պէյրութ, 4 Մայիս 1974, թիւ 92. նոյնը արտատպուած՝ Չանասէր, Պէյրութ, ԼԷ. տարի, Ապրիլ-Մայիս 1974, թիւ 7-8-9-10, էջ 170-178:*

<sup>4</sup> Սըրրլեան, «ՄԱԿի 30րդ Պարբերութեան», էջ 27:

<sup>5</sup> Մեր «Հայերու Դէմ Գործուած Յեղասպանութիւնը...»ին մէջ իւրաքանչիւր պետութեան դիրքորոշումին արմատները տուած ենք:

<sup>6</sup> 28րդ եւ 29րդ պարբերութիւնները կը վերաբերէին Հայերու Յեղասպանութեան հետ կապ չունեցող պատմական տուեալներու, օրինակ՝ Ֆրանսայի մէջ 1572ին Հիւլընոսներու Ս. Բարթոլոմէոսի օրուայ ջարդին իբր կրօնական ցեղասպանութիւն:

<sup>7</sup> 1964 Հոկտեմբերին Պէյրութի մէջ կազմուած այս Մարմինին անդամներն էին Տիգրան Թոսպաթ, Սարգիս Ապտալեան (Վահէ-Վահեան), Գերսամ Ահարոնեան, Տքք. Տիգրան Վարժապետեան, Վազգէն Այգունի (Գէորգ Պաղճեան), Օննիկ Մարգիսեան, Ժիրայր Նայիրի, Հրանդ Գանգրունի, Լեւոն Վարդան, Չաւէն Սըրրլեան, Սիմոն Սիմոնեան, Մանասէ Շնորհոթեան (յետագային վերապատուելի), Աշոտ Ալթունեան եւ Եղիշէ Մանուկեան: Տասնամեակի մը ընթացքին փոփոխութիւններ եղած էին:

<sup>8</sup> F.O.371/72180:

<sup>9</sup> Չաւէն Սըրրլեան, «Պատմական Կարեւոր Յայտնութիւն Մը՝ 1948ին Պատրաստուած ՄԱԿի Մէկ Տեղեկագիրը 8 Էջեր Տրամադրած Էր Մեծ Եղեռնին», *Խօսնակ Պաշտօնաթերթ*, ԻԲ. տարի, թիւ 7-9, Յուլիս-Սեպտեմբեր 1979, էջ 25-26: Նոյնութեամբ արտատպուած *Չարթօնք* օրաթերթին մէջ, Պէյրութ, ԽԳ. տարի, 30 Սեպտեմբեր 1979, թիւ 2(12749), էջ 2:

<sup>10</sup> Նոյն:

<sup>11</sup> Zaven Messerlian, "A United Nations Report in 1948 Related to the Armenian Genocide," *Հասկ Հայագիտական Տարեգիրք, Հտր. Բ.-Գ.*, Անթիլիաս, 1981-82, էջ 465-476:

<sup>12</sup> Levon Keshishian, "This and That from New York," *Armenian Weekly*, Vol. 60, 11 June 1983, No 2568:

- <sup>13</sup> FIBA – Fellow of the International Biographical Association, Cambridge, England:
- <sup>14</sup> Levon Keshishian, “This and That from New York,” *Armenian Weekly*, Vol. 60, 27 August 1983: Քեշիշեանին գրած նամակներէս մէկուն մէջ առարկած էի անունիս առջեւ դրկտ. գրելուն, ուստի նոյն գրութեան *Armenian Observer*ի 31 Օգոստոս 1983ի թիւին մէջ նոյն ձեւով գրած էր անունս փակագիծի մէջ աւելցնելով “The Dr. title is given by me”:
- <sup>15</sup> Այս Մարմինի 1983ի անդամներն էին Յակոբ Աւետիքեան, Ժիրայր Դանիէլեան, Վաչէ Ղազարեան, Չաւէն Մարրլեան եւ Լեւոն Վարդան:
- <sup>16</sup> A.A.A.B.I.= Annual Associate American Biographical Institute: Այս կազմակերպութեան Research Board of Advisorsի պատուոյ անդամ էի:
- <sup>17</sup> Չաւէն Մարրլեան, «Հայկական Հարցի Հոլովոյթը Մեծ Եղեռնի 70ամեակին» *Խօսնակ Պաշտօնաթերթ*, ԻԸ. տարի, թիւ 12, Դեկտեմբեր 1985, էջ 10-13, արտաստպուած *Չարթօնք* օրաթերթի կողմէ, 11-15 Փետրուար 1986ի, ԽԹ. տարի, թիւ 104-107ի մէջ:
- Այս տողատակը կը վերաբերի նաեւ յաջորդող բոլոր գրութեան:
- <sup>18</sup> *Իզվեսթիա*, Մոսկուա, 18 Նոյեմբեր 1985:
- <sup>19</sup> Մեր գրութիւնը մեր անձնական ջանքերուն պատմութիւնն է լոկ:

EFFORTS TOWARDS THE RESTORATION OF THE 30<sup>TH</sup> PARAGRAPH OF THE  
STUDY OF THE QUESTION OF THE PREVENTION AND PUNISHMENT OF THE  
CRIME OF GENOCIDE  
(A PRELIMINARY UNITED NATIONS REPORT ISSUED ON JUNE 25, 1973)  
(Summary)

ZAVEN MESSERLIAN

The author gives the story of his personal efforts towards the restoration of the cancelled Paragraph 30 of the Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, a preliminary United Nations report issued on June 25, 1973. Thanks to the efforts of the author who had written a well documented letter to the UN Secretary General, the said paragraph had mentioned the following: “passing to the modern era, one may note the existence of relatively full documentation dealing with the massacres of Armenians, which have been described as ‘the first case of Genocide in the twentieth century’”.

After the cancellation of Paragraph 30, the author wrote many letters to the UN Secretary General, as well as responsible UN administrators, and received answers. This correspondence is given in the article. Eventually, thanks to the tireless efforts of Armenian organizations and individuals (including the author), the new rapporteur, Benjamin Whitaker, included in his final report in 1985 a new paragraph 24 which said: “The Nazi aberration has unfortunately not been the only case of genocide in the twentieth century. Among other examples which can be cited as qualifying are the ‘...Ottoman massacre of Armenians in 1915-1916...’”.